

## Բարդ նախադասությունը՝ պարզի

### (ստորադաս նախադասությունը՝ դերբայական դարձվածի)

1. Նախքան կկողմնորոշվեր, մի ուժեղ հարված հասավ թիկունքին:
2. Նստում էինք ու սպասում, մինչև պապը գար:
3. Չնայած բոլորը հավաքվել էին արդեն, պարահանդեսը չէր սկսվում:
4. Այն օրը, երբ առաջին անգամ հրացանը վերցնելով՝ սարերը ելավ, հաճախ է վերհիշում:
5. Ի լրումն այն ամենի, ինչ գրել էի նախորդ նամակում, ուզում եմ մի խոստովանություն անել:
6. Որքան անհրաժեշտ էք համարում, այնքան էլ կմնամ:
7. Ջգաց, որ փախչելու տեղ չկա, և սեղմվեց մի անկյունում:
8. Կինը, որ ամբողջ ժամանակ մտասույզ իր կարն էր անում, բարձրացրեց գլուխը:
9. Խմբին մոտեցավ մի աղջիկ, որ հագել էր երկար շրջազգեստ:
10. Ոչ մի կերպ չէի պատկերացնում, թե ինչ էր սպասվում ընտանիքիս:
11. Պարզ չէ, թե ինչ ճանապարհով է երեխան հասել այստեղ:
12. Չեմ գղջում, որ ընկերոջս արտահայտվելու հնարավորություն չտվեցի:
13. Տիկին Սաթենիկը, որ Մխիթար սպարապետի կինն էր, կանգնած էր ամրոցի՝ անդունդի վրա կախված միակ քարե պատշգամբում:
14. Ջգում էր, որ յուրայինների վիճակը ժամ առ ժամ վատանում էր:
15. Պարզվեց, որ պարսկական զորքերը ծուղակն են ընկել նեղ կիրճը մտնելուց հետո:
16. Նրան նայեցի ու ապշեցի, որ իմ խոսքերից բնավ չէր այլայլվել:
17. Եվ ուղտերը, որոնք, ծանր հակերի տակ տնքալով, չոքում էին Հյուսիսային ձորի հրապարակում, իրենց գլուխները սպիտակ գորանոցի կողմը դարձրին:
18. Գետի կամրջով գյուղից արագորեն հեռացողները նրանք էին, ովքեր ոսկի ունեին և կարող էին քիչ թե շատ ապահով ապրել օտարության մեջ:
19. Հյուսիսային ձորից պարզ երևում էր, թե ինչպես գունավոր գորգերը հանեցին քարանձավներից և շալակով տարան:
20. Սանդուխթի գլխից մի պահ նայեցի, թե ինչպես ծերունին կորավ մութի մեջ՝ քարերը մահակով շոշափելով:
21. Ջերմ կարոտով սպասում եմ անհամբեր,  
Որ մեկը իմ փակ դռները կըբանա...
22. Ես չեմ հիշում՝ երբ և ուր  
Հանդիպեցի քեզ:
23. Ու ճշածսիրտըս վայելքից անկարծ՝  
Թվաց, որ մեկը կանչում է տրտում...
24. Դու կգաս ու կրկին հեքիաթով կըղյուծես,  
Լուսերես կըցրես մառախուղն իմ հոգու,

Ոսկեշող հայացքով և քնքուշ խոսքերով, որ գիտես  
Միայն դու:

25. Մենք չէինք ուզում հավատալ, որ նա խաբել է բոլորիս:
26. Նավապետը պարզապես ցանկացել էր իմանալ, թե աղետի ժամանակ  
ճամփորդները կարո՞ղ են գտնել իրենց նավակները:
27. Մի՞թե կարելի է, որ քաղաքական նկատառումներով դիտարկենք այդ պարզ  
հարցը:
28. Որտեղից էր գալիս այդ տխուր հեծեծանքը՝ չէի կարողանում հասկանալ:
29. Թողե՛ք, որ հանգչի իմ սիրտը հոգնած:
30. Լավ է՝ ելնեմ-գնամ, տամ փողոցին տուրքս:
31. Վհատ սոսկումի տանջանքով կզգաս,  
Որ որոնածդ բնավ չես գտնի:
32. Դուք, որ ապրում եք սրբերի նման այդ դրախտի մեջ,  
Չե՞ք տեսնում արդյոք վշտերս տանջող...
33. Ինձ դուր էր գալիս, թե ինչպես էր նա գլխարկը ձիգ դնում գլխին և եզրերը մի  
քիչ վեր բարձրացնում:
34. Բայց հենց այդ պահին լավեց աղջկա բարձր ու սուր, ականջ ծակող ճվճվոցը,  
որը երվի թե հասավ մինչև կայարան:
35. Միգուցե և լավ էր, որ նա ինձ չթողեց մեքենան գործի գցել, քանի որ երեխան  
ամեն ինչի մեջ կխառնվեր:
36. Հետճաշյա հանգստի ժամանակ մեզ կարգադրվեց, որ հանգիստ մնանք, այս ու  
այն կողմ չվազենք, չթռչկոտենք, այլապես մեզ կնկատեն:
37. Ինձ համար հաճելի էր, որ խաղալիս ինձ ընկերակցի Լիան, որովհետև  
սովորաբար քույր ու եղբայր իրար չեն ընկերակցում:
38. Կարելի է կարծել, որ Իրենեն ծնվել էր ոչ մեկին չանհանգստացնելու համար:
39. Աղջկա ուշադրությունը գրավեց այն, որ ես կտրուկ կանգ առա և առանց որևէ  
բան ասելու՝ դուրս եկա:
40. Քանի որ նայում էի ձեռքի ժամացույցին, անմիջապես երևաց, որ արդեն  
կեսգիշեր է:
41. Ո՞ւմ է հայտնի՝ ինչ կբերի իր հետ վաղվա օրը:
42. Մի՞թե սա էր այն, ինչ ես յաղքան երկար տարիներ փնտրում էի:
43. Արդյոք հանցա՞նք է, որ քեզ սիրում եմ:
44. Նրա ուզածն այն է, որ մենք բաժանվենք:
45. Իմաստուն պետք չէր լինել գուշակելու համար, որ նա խորհրդի անդամ է:
46. Գնում էինք դեպի այն հատվածը, որտեղից սկսած՝ գետը ճյուղավորվում էր  
երկու մասի:
47. Ուզում էր բժիշկ դառնալ, որ բուժի հարազատներին:
48. Մեր պատմությունն այնն է, ինչից մենք սկիզբ ենք առել:
49. Ես միշտ իմ սրտում պահում եմ նրա նաունը, ով գուցե ինձ բնավ էլ չի հիշում:
50. Այն օրից, երբ մենք բաժանվեցինք, ես այլևս չտեսա նրան: